

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ*

«Ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ԸՍՏ ԿԱՐԳԻ լինիցի» (Ա Կորնթ. ԺԴ 40):

«Խնդամ (կուրախանամ) իբրեւ տեսանեմ զԿԱՐԳՆ (կարգապահությունը) ձեր եւ զհաստատութիւն հաւատոց» (Կող. Բ 5):

Ա. ՆԱԽԱԲԱՆ

Մեր նյութին մեջ մտնելե առաջ կարևոր կնկատենք հստակել ու հաստատել հետևյալ քանի մը կետերը, իբրև նախադրյալներ մեր գրության:

Ա. Նախ գնահատելի կգտնենք մտածումը և ծրագիրը զոր ունեցած է Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը, այստեղ հրավիրելու Սաղիմական հոգևոր ուերունդը, հանդիսադրելու համար երեք կարևոր տարեդարձներ, և առիթը օգտագործելով քննարկելու նույնքան և ավելի կարևոր հարցեր, որոնք սերտորեն կհուզեն և կհետաքրքրեն Հայց. Եկեղեցին: Մենք սիրով ընդառաջեցինք այս եղբայրական հրավերին, ոչ միայն անձամբ ներկա լինելու մեր Ուսումնամայրին այս հանդիսության, այլ նաև մեր սիրահոժար գործակցությունը բերելու վերոհիշյալ հարցերու քննարկումին: Ուր որ կա կանչը հօգուտ Հայց. Եկեղեցիի եղբայրական համագործակցության այնտեղ պիտի ըլլանք մենք առանց տատամսումի, ի հեճուկս ամեն տեսակ այլ նկատումներու:

Բ. Մենք գոհ մնացինք, որ մեր այս համագումարի մասին տեղյակ պահված է Ամենայն Հայոց Հայրապետը և ստացված է Անոր հավանությունը և օրհնությունը: Որովհետև նման հարցերու քննարկումը, որքան ալ

---

* Ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարքը սույն բանախոսությունը կարդացել է Երուսաղեմի հայոց վանքում, օգոստոսի սկզբին գումարված միաբանական համագումարում;

ակադեմական դրլա, անհրաժեշտ է որ կատարվին գիտությամբ ու հավանությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, ամենքիս համար այլևս ծանոթ ու հարգելի պատճառներով:

Մեր այս խորհրդակցությունները և անոնց եզրակացությունները, ակադեմական դրլալով հանդերձ կրնան որպես ատաղձ ծառայել և նյութ հայթայթել Հայց. Եկեղեցիի բարձրագույն օրկանին—Եպիսկոպոսական ժողովի օրակարգին: Մենք հարցերը այս տեսակետեն դիտելով կմասնակցինք այս համագումարին և ըստ այնմ կներկայացնենք մեր նյութը:

Գ. Այս համագումարին իբրև ընդհանուր նյութ դրված է. «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍՕՐ»: Ընդհանուր այս նյութը կստորաբաժնվի չորս մասերու որոնք են. 1) Կրոնական դաստիարակություն, 2) Ծես և արարողություն, 3) Կարգ ու կանոն, 4) Ազգային գործունեություն: Ըստ մեզի Հայ Եկեղեցիի այսօրվան կարևորագույն և առաջնահերթ առաքելությունը կարելի է խտացնել ու համադրել երեք բառերու մեջ. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒՄ, և ՎԵՐԸՆԾԱՅՈՒՄ: Այս երեքն ալ վերոհիշյալ չորս նյութերուն մեջ կրնան ներդրվիլ իբրև անոնցմե յուրաքանչյուրին հիմնական հատակը և հասարակաց տարրը:

Յուրաքանչյուր նյութին մեջ պետք է ներմուծենք ամենեն առաջ մեր Եկեղեցի **Վերանորոգության** գաղափարը: Ապա հԱստված, հԱվետարան և հԵկեղեցի ունեցած մեր հավատքին և սիրույն **Արծարծումը:** Ու վերջապես մեր **Վերընծայումը** այն իտեալին ու այն նպատակին, որուն համար մկրտված է ամեն հայ անհատ:

Դ. Մեր կատարելիք երեք տարեդարձներու մեջ, ըստ մեզի, կարևորագույնը **Ժառանգավորաց վարժարանինն է.** որովհետև երկու պատրիարքները, որոնց տարեդարձներն ալ կատարելու հրավիրված ենք, որքան ալ ունենան իրենց ուրույն անձնական արժանիքները, իրենց գլխավոր գործունեությունը կապված է Ժառանգավորաց վարժարանի հետ: Զաքարիա պատրիարք (1840—1844) իբրև հիմնադիր այս վարժարանին և Դուրյան պատրիարք իբրև վերաբացողը փակված Ժառանգավորաց վարժարանին և արդի ժամանակներու դրոշմ դնողը անոր վրա:

Անհրաժեշտ է արդարև, որ շեշտվի կարևորությունը և կենսականությունը Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանին Հայաստանյայց Եկեղեցիի համար ընդհանրապես և այս Պատրիարքության համար մասնավորաբար: Կարժե որ անխտիր ամենքիս մասնավոր ուշադրության և հոգածության առարկա դառնա այս կրոնական ու կրթական հաստատությունը, ոչ միայն իբրև ներկաներուս ուսումնամայրը, այլ՝ առավելաբար իբրև Հայց. Եկեղեցիի այն կրթական ու կրոնական հարկը, որ օժտված է գրեթե բոլոր անհրաժեշտ պայմաններով՝ նախախնամական դեր կատարելու համար մեր Եկեղեցիի ներկա և ապագա կյանքին մեջ. որովհետև նախ կգտնվի ծաղկելու և զորանալու գրեթե անկաշկանդ պայմաններու մեջ. երկրորդ՝ կան այստեղ նյութական, կրոնական, մշակութային և այլ բազմաթիվ կարելիություններ, որոնք անհրաժեշտ են լավ կազմավորված եկեղեցականներ պատրաստելու, ինչ որ պետք է ըլլա Հայց. Եկեղեցիին առաջնահերթ, ամենեն կարևոր ու սրբազնագույն գործը: Բայց անհրաժեշտ կնկատենք ավելի շեշտված տեսնել հոգևորականներ պատրաստելու կոչված այս և մյուս մեր հոգևոր վարժարաններեն ներս՝ **կրոնական հատուկ դաստիարակություն մը,** որուն պակասը զգալի եղած է առ հասարակ մեր արդի ժամանակներու բոլոր կրոնական դպրոցներու մեջ:

Բ. ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՆՅՈՒԹԻՆ

Ես հրավիրված եմ այսօր խոսելու ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆԻ մասին եղբայրական այս սեղմ շրջանակի մեջ: Սակայն այս նյութի ներկայացման ընթացքին իմ մտահոգություններս և նպատակներս կանդրադարձնեմ, բնականորեն, այս սեղմ շրջանակը և կտարածվեմ մեր հավաքականության ամբողջության վրա:

Ներկա ժամանակներու մեջ թերևս ոչ մեկ բանի այնքան շատ պետքը և պահանջքն ունինք որքան՝ ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆԻ: Մեր հանապազօրյա հացեն ավելի պետք ունինք անոնց, եթե իբրև կազմակերպյալ հավաքականություն կուզենք ապրիլ ու գոյատևել: Ասիկա ոչ միայն իմ անձնական անխախտ համոզումն է, այլ կենթադրեմ որ համոզումն է նաև այստեղ հավաքված սրտցավ հոգևորականության ամբողջության, ի գլուխ ունենալով առաքելական Ս. Աթոռույս Ամենապատիվ պատրիարքը, որ հարմար դատած է դնել այս նյութը գլուխը օրակարգին:

ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆԻ կարիքը և կարոտն ունինք մենք թե՛ իբրև ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, թե՛ իբրև ԵԿԵՂԵՑԻ, և թե՛ մանավանդ իբրև ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Եթե այսօր մեր շատ մը փափաքները և կարելիությունները չեն իրականանար, և եթե մեր շատ մը բարյացակամ ջանքերն ու ճիգերը կջլատվին, գլխավոր պատճառը չգոյությունն է մեր մեջ ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆԻ: Եթե մինչև իսկ ընդունինք որ բաղձալի այդ ԿԱՐԳ ու ԿՈՆՈՆԵՆ մասնակի բաներ մը կան մեջտեղ, այս անգամ ալ պակտողը այդ քիչին հանդեպ հարգանքն է, այսինքն գործադրության բծախնդրությունը: Մեր համոզումով՝ այս բոլոր պակասները կրնան լրանալ միայն երկու տեսակ ՆՈՐ ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆԻ հաստատումով Հայց. Եկեղեցիեն ներս:

Տարակույսե վեր է, թե գործադրելի ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆՈՎ մեր ույժերը շատ ավելի բարի արդյունք պիտի տան. մեր կարելիությունները իրականություն պիտի դառնան, ու մեր աշխատանքները ավելի պտուղ պիտի բերեն: Ու մենք ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆՈՎ շատ ավելի պիտի արժևորվինք, հարընտանանք ու զորանանք իբրև ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵԿԵՂԵՑԻ և ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Առանց ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆԻ մեր կարողությունները կնմանին ջուրերու, որոնք հազիվ դուրս ելած իրենց ակունքներեն՝ կսկսին նվազիլ ու կորսվիլ իրենց ճամբուն վրա բացված խոռոչներու և փխրուն հողերու մեջ, առանց դաշտեր ու պարտեզներ ոռոգելու, առանց ջաղացքներ դարձնելու, առանց էլեկտրակայաններ աշխատցնելու և առանց ծարավահյուծ հոգիներ հագեցնելու:

Ես անձնապես ՎԱՏՆՈՒՄԸ նկատած եմ ծանրագույն մեղքը, զոր մարդիկ կրնան գործել, և զոր Անառակ Որդին գործեց ինքնափճացումի իր անխորհուրդ արարքին մեջ: Արդարև առակին մեջ Անառակին վերագրված միակ մեղքն է այդ. «**վատնեաց** զինչս իւր, զի կեայր անառակութեամբ». ինչ որ կնշանակե, թե Անառակը կապրեր առանց ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆԻ կյանք մը: Միայն նյութական ինչքը չէ, որ կրնա վատնվիլ. հոռեգույնը մեր կարելիություններուն և կարողություններուն, մեր տաղանդներուն ու երիտասարդության, ու վերջապես մեր թանկագին կյանքին ու ժամանակին վատնումն է: Անկանոն ու անկարգ կենցաղը, ըլլա այդ անհատական կամ հավաքական, ամենեն ողբալի վատնումն է:

Գ. ԻՆՉ Է ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ

Այժմ մտնենք մեր նյութին մեջ և հարց տանք անմիջապես. ի՞նչ պետք է հասկնալ՝ խորքին ու գործնականին մեջ՝ կարճ ու կոկիկ այս երկու բառերով: Առանց շատ կենալու անոնց ունեցած իմաստի զանազան երանգներուն վրա, կանխենք ըսել որ անոնք այլևս գրեթե նույն իմաստը ունին ներկայիս մեր մեջ, մին հայերեն լեզվով, իսկ մյուսը՝ հունարենե փոխ առնված և այլևս միջազգայնացած բառով մը: Թերևս անոնց ունեցած պարզագույն և ընդհանուր իմաստը տված կըլլանք, եթե ըսենք որ ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆ կնշանակեն այն շիտակ և օգտակար սկզբունքները, զորս պարտինք կիրարկել մեր կյանքին ու գործերուն մեջ, որոշ նպատակներ և հառաջադրություններ իրականացնելու մեր ճամբուն մեջ: Եթե ուզենք այդ երկու բառերուն մեջ տարբերություն դնել կամ անոնց իրարու հետ ունեցած սերտ կապը մատնանշել, պիտի ըսենք. ԿԱՆՈՆԸ գաղափարն է, իսկ ԿԱՐԳը անոր մարմնացումը. ԿԱՆՈՆՆ պատճառն է. ԿԱՐԳը անոր արդյունքը: Առաջինը օրենքն է. երկրորդը անոր գործադրված ձևը: Կյանքի մեջ ԿԱՆՈՆ պետք է մտնե որպեսզի հառաջ գա ԿԱՐԳԱՎՈՐՅԱԼ ԿՑԱՆՔԸ: Այն աստիճան սերտորեն կապված են այս երկուքը իրարու, որ առ հասարակ միասին կգործածվին, և այլևս դարձած են Սիամական երկվորյակներ, որոնք թեև իրարմե անբաժան են, բայց միաժամանակ, յուրաքանչյուրը կպահե յուրահատուկ անձը և անհատականությունը: ԿԱՆՈՆԸ գործադրվելով կվերածվի ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ, եվրոպական լեզուներու մեջ ծանոթ բառով «ՏԻՍԻԲԼԻՆ»ի, որ ուրիշ բան չէ, եթե ոչ կյանքի մեջ մտած ԿԱՐԳն ու ԿԱՆՈՆը:

Ինչպես ծանոթ պիտի ըլլա շատերուս՝ «ԿԱՆՈՆ» հունարեն բառը իր սկզբնական իմաստին մեջ կնշանակե քանակ, կամ ուղիղ փայտ, որմե շիտակ գիծ կելլե և որ կծառայե չափելու իրերու լայնքն ու երկայնքը, բարձրությունն ու խորությունը: «Չափ ուղղության», կըսե Հայկազյան Բառարանը: Ժամանակի ընթացքին երկրաչափական գործիքի մը համար հատկացված այս բառը մարդիկ—հատկապես Քրիստոնեական Եկեղեցին—սկսան գործածել այն բոլոր բաներու համար, որոնք ՇԻՏԱԿ էին, ՈՒՂԻՂ էին և փափաքելի չափն ունեին կյանքին մեջ կիրարկվելու համար: Ըստ այսմ Աստվածաշունչի ամենքին կողմե ընդունելի ըլլալու սահմանված և հարազատ նկատված գիրքերու ամբողջությունը կոչվեցավ «Կանոն Սուրբ Գրոց»: Այս գիրքերեն սկզբնական նկատվածները կոչվեցան «Նախականոն». իսկ ետքեն ավելցածները—հատկապես Յոթանասնից հունական բնագրին վրա—որոնք ևս հանձնարարելի էին ընթերցման և հոգևոր շինության համար, կոչվեցան «Երկրորդականոն». այսինքն Ս. Գրոց «Կանոն»ին վրա հետո ավելցած. իսկ իբրև անհարազատ մերժվածները կոչվեցան «Անկանոն»: Այդ բառով կոչվեցան նաև մեր մեջ տոնի մը առթիվ երգվելիք և շիտակ նկատված, և հետևաբար ամենքին կողմե ընդունված շարականներու ամբողջությունը. օրինակ «ԿԱՆՈՆ Ս. ԾՆՆԴԵԱՆ» կնշանակե Ս. Ծննդյան տոնին օրը երգվելիք շարականներու համադրությունը:

Ի վերջո սակայն ԿԱՆՈՆ բառը հատկացվեցավ այն օրենքներուն և տնօրինությանց, զորս Եկեղեցական ժողովները և հեղինակավոր Հայրապետներ սահմանեցին իբրև հավատքի ուղիղ դավանանք և ապրելու շիտակ հրահանգներ, որոնք ամենքի կողմե ընդունելի պիտի ըլլային: Այսպես կազմվեցան ԿԱՆՈՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ—«Տրուա Քանոնիք»—որոնք մեկ կող-

մե կճշդեին Եկեղեցիի ուղղափառ հավատալիքները և մյուս կողմե կձրգտեին բարելավել անդամներու փոխհարաբերությունները, միաժամանակ կվերահաստատեին Եկեղեցիի մեջ խախտած ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆը:

Համաձայն կենցաղի երկու գլխավոր տեսակներուն, այսինքն **անհատականին** ու **հավաքականին**, ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆն ալ գլխավորաբար երկու տեսակ է: Ոմանք սահմանված են, օրինակ, Եկեղեցիի ամբողջության համար, անխտիր բոլոր հավատացյալներուն համար. իսկ ոմանք ալ մասնավոր անհատներու կամ խմբակցություններուն համար: Առաջինները կճշդեն, օրինակ, դավանանքը, որուն պիտի հավատա ամբողջ Եկեղեցին առանց բացառության. պաշտամունքները և ծեսերը, զորս պիտի կատարե Եկեղեցին ամբողջով և ամբողջին համար· Հավաքականության համար սահմանված ԿԱՐԳերն ու ԿԱՆՈՆները կճշդեն նաև հավատացյալներու փոխհարաբերությունները և քրիստոնեական ապրելու շիտակ կերպերը և օրենքները: Ասոնք դրված են Եկեղեցիի ընկերային և հավաքական կյանքը ավելի համերաշխ և ավելի կարգավորյալ դարձնելու նպատակով:

Ասոնց զուգահեռաբար կան նաև ուրիշ ԿԱՐԳեր ու ԿԱՆՈՆներ, որոնք սահմանված են լոկ որոշ անհատներու և որոշ խմբակցություններու համար, որոնք կծառայեն Եկեղեցիին, և կձգտին ավելի բարձր հոգևոր կատարելության, և որոնք աշխարհի մեջ ապրելով հանդերձ քաշված են աշխարհե և իրենք զիրենք տված են ավելի Աստվածամերձ կյանքի: Կակնարկենք, **հոգևորականներու** կամ **կրոնավորներու** և անոնց համար միայն սահմանված ԿԱՐԳերուն ու ԿԱՆՈՆներուն:

Դ. ԿԱ՞Ն ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻԻ ՄԵՋ

Այժմ մտնենք այս երկու տեսակ ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆներու մանրամասնության մեջ և նախ ստուգենք անոնց գոյությունը կամ չգոյությունը մեր մեջ:

Քրիստոնեական Եկեղեցին, առաքելական դարեն սկսյալ, սովորություն ընած է իր առօրյա կյանքը կանոնավորել և իր խնդիրները լուծել համաձայն Ավետարանի սկզբունքներուն. իսկ ուր որ Ավետարանի ուսուցումները հրստակ չէին, ըստ իր առաջնորդներե բաղկացյալ ժողովական որոշումներուն: Ասոր առաջին օրինակը կտրվի մեզի Երուսաղեմի Առաքելական ժողովով, ուր «Ժողովեցան Առաքեալքն եւ Երիցունք» և տվին Քրիստոնեական Եկեղեցիին առաջին ԿԱՆՈՆական որոշումները (Գործ. ԺԵ գլուխ): Այս սովորությունը շարունակվեցավ դարերու ընթացքին մինչև այսօր: Մեր օրերուն ծանոթ օրինակն է վերջին տասնամյակներուն գումարված՝ Վատիկանի Բ ժողովը, որ կբաղկանար միայն Հռովմեական Եկեղեցիի եպիսկոպոսական դասեն և որ վերանայումի և վերանորոգումի ենթարկեց իրենց Եկեղեցիի վերաբերյալ գրեթե ամեն ինչ:

Քրիստոնեական Եկեղեցիի մեջ գումարված են ժամանակի ընթացքին **Տեղական** ու **Տիեզերական** ժողովներ, որոնք արդարև կարևոր ԿԱՆՈՆներ սահմանած ու ԿԱՐԳեր դրած են Եկեղեցիի համար: Ասոնք բնականորեն ընդունված էին նաև Հայոց Եկեղեցիին կողմե իբրև անբաժան մասը ընդհանրական Եկեղեցիին: Ասոնք հայերենի թարգմանված են Ե դարեն սկսյալ և այսպես դարձած են սեպհականությունը նաև մեր Եկեղեցիին: Սակայն ասոնք մեկ գրքի մեջ համադրված ամբողջություն մը չէին կազմեր, այլ անջատ-անջատ կպահվեին, հոս ու հոն ցրված: Նույնն էր պարագան նաև

մեր եկեղեցական ժողովներուն: Օրինակ Շահապիվանի կամ Դվինի ժողովներուն կանոնները իրարմե անջատ կերպով կպահվեին իբրև ուրույն և անջատ կանոնադրություններ:

Մեր Հովհաննես Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսին (717—728) կպատկանի նախաձեռնությունը և փառքը ի մի հավաքելու այս ցրված ու անջատ կանոնախումբերը և կազմելու Հայ Եկեղեցիին առաջին պաշտոնական ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ, ինչպես կհաստատե ինք այդ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻ հիշատակարանին մեջ:

«Կազմեցին Սուրբ Հարքն զԿանոնական բանից դիտաւորութիւն... եւ վասնզի ոմանք առ ոմանս եւ ոչ ամենեքին առ ամենեսեան սերմանեալք, կամեցայ զբովանդակ զառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի Հայրապետանոցի առտ արմատացուցանել» (ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ. Վազգեն Հակոբյան, Ա հատոր, էջ 535):

Այդ նույն Հիշատակարանին մեջ անուղղակի կերպով տրված է նաև ԿԱՆՈՆ բառին լավագույն բացատրությունը Իմաստասեր Հայրապետի կողմե, իբրև՝ «Լուսաշաւիղ ճանապարհ առ Աստուած՝ հնազանդութիւն ընդհանուր հաւատացելոց Քրիստոսի» (նույն. անդ):

Ուրեմն ԿԱՆՈՆ ըսվածը առ Աստված առաջնորդ լուսավոր ճանապարհն է, որուն պարտին հնազանդիլ և հետևիլ բոլոր Քրիստոսի հավատացողները:

Օձնեցիի կազմած ԿԱՆՈՆԱԳԻՐՔը, ըստ երևույթին, դարերու ընթացքին՝ առավել կամ նվազ բծախնդրությամբ պահած է իր օրինական հանգամանքը և գործադրված է: Հաջորդ դարերուն՝ նոր կանոնախումբեր ավելցած են անոր վրա, և այդ խճողված ձևին մեջ հասած է մինչև մեր օրերը: Սակայն, դարձյալ ըստ երևույթին, որուն մանրամասնության ավելորդ կնկատենք մտնել, վերջին դարերուն՝ ժամանակներու աննպաստ պայմաններու բերմամբ, այսինքն համատարած տգիտության, հալածանքներու, գաղթերու, ֆիզիքական գոյության մտահոգություններու և ընդհանուր անտարբերության հետևանքով՝ տակավ առ տակավ և գրեթե անզգալիորեն կորսնցուցած է այդ ԿԱՆՈՆԱԳԻՐՔը իր պաշտոնական կամ կանոնական հանգամանքը, և նկատված է առավելաբար պատմաբանասիրական կարևոր վավերագիր մը, քան գործադրելի ԿԱՆՈՆԱԳԻՐՔ մը: Այս իսկ պատճառով չէ հրատարակված Հայ Եկեղեցիի հոգևոր իշխանության կողմե, ինչպես արդարև հրատարակված են Աստվածաշունչը և եկեղեցական բոլոր գիրքերը: Սակայն զանազան ժամանակներուն, և զանազան անձերու կողմե և զանազան տեղեր անկե ընդարձակ կամ փոքր մասեր տպագրյալ ձևով լույս տեսած են: Ասոնց մանրամասնության համար տես Վազգեն Հակոբյանի ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, (տպ. Երևան, 1964, Ա հատորի ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ բաժնին մեջ, էջք 26—29): Ասոնց մեջեն կհիշատակենք միայն երկուքը. Ա) Աբեղ արք. Մխիթարյանցի «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՈՑ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ, հանդերձ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲՔԻ ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1878»: Այստեղ Կանոնագրքեն մտած են միայն հայկական եկեղեցական ժողովներու և նշանավոր Հայրապետներու Կանոնախումբերը, երբեմն բովանդակության վերաշարադրմամբ և կրճատումներով, (ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, Վազգեն Հակոբյան, Ա հատոր, 1964, ներածություն, էջ 27): Բ) Ներսես արք. Մելիք-Թանգյանի «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ, Ծուշի 1903»: Ամենեն շատ կանոնախումբեր պարունակող հրատարակու-

թյունն է. «Սակայն Կանոնագիրքը դարձյալ լրիվ ընդգրկված չէ։ Հրատարակության մեջ կանոնագիրքի կառուցվածքից ոչինչ չի մնացել, հրատարակիչը իր խմբավորմամբ տալիս է հունարեն առանձին կանոնախմբերի թարգմանությունները (Հունարենի՞ց թե ռուսերենի՞ց) կրճատումներով, համառոտ վերաշարադրմամբ, ամբողջ կանոններ դեն նետելով, թարգմանությանը կցելով քննադատական իր դիտողությունները, որոնք հաճախ անտեղի են, և այնուհետև հայ հին թարգմանության բնագրերը» (նույն. անդ)։ Կեզրակացնե Վազգեն Հակոբյան. «Այսպիսով այժմ հայագիտության մեջ չունինք ոչ միայն Կանոնագրքի գիտական, այլ նույնիսկ սովորական, բայց ամբողջական հրատարակություն» (անդ, էջ 29, Ներածություն)։

Եկեղեցիի մը վերաբերյալ ամեն ինչ (դավանանք, պաշտամունք, ծես, բարոյական հարցեր, հովվական ու վարչական խնդիրներ, այլովքն հանդերձ) հիմնված պետք է լինեն կանոնական տվյալներու վրա։ Այս բոլորը ներկայիս ունինք այս կամ այն ձևի տակ. բայց մեզմե ոչ ոք կարող է մատնանշել կանոններ, որոնց վրա հիմնված ըլլան և որոնցմով ճշդված ըլլան այս բոլորը։ Մեր մոտ ամեն ինչ կընթանա ավանդաբար և ըստ սովորության։ Այնպես որ հավանաբար միակ Եկեղեցին ենք որ ներկայիս ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ չունինք։ Եթե այսօր ուրիշ Եկեղեցիներու ներկայացուցիչներ հարցնեն մեզի. «Ունի՞ք ԿԱՆՈՆԱԳԻՐՔ, որով կընթանան ձեր Եկեղեցվո գործերը», մեզմե ոչ ոք ոչինչ ցույց պիտի կրնա տալ, բացի հիշելե գործածութենե դադրած և զանազան կանոնախումբերե բաղկացած վերոհիշյալ ծանոթ գրավոր գործը։ Թե արդարև այդ պատմական վավերագիրը մեր մեջ իբրև պաշտոնական կանոնագիրք չի գործածվիր, փաստն այն է, որ չուսուցվիր մեր կրոնական վարժարաններու մեջ, իբրև Հայ Եկեղեցիի կանոնական օրենքը։

Այնպես որ մեր Եկեղեցին ներկայիս կգտնվի գրեթե այն նույն կացության մեջ, ուր կգտնվեր Հովհաննես Իմաստասեր կաթողիկոսեն առաջ։ Եվ հետևաբար նույնությամբ կպատշաճի նաև մեզի և մեր ժամանակին այն ինչ որ ըսած է Իմաստասեր Հայրապետը 719ին Դվինի մեջ գումարված ժողովի բացման իր ճառին մեջ, որմե հատված մը կուզենք հիշել այստեղ թարգմանաբար։

«Քանզի կտեսնեմ, որ անկարգությունը շատցած է բազմաթիվ և ծանր իրերու մեջ. ոչ միայն հասարակ ժողովուրդին մեջ, այլ՝ առավելաբար հոգևոր դասուն և եկեղեցիներու առաջնորդներուն մեջ։ Մենք, որ մեկ լեզվով՝ և մեկ քարոզության միջոցավ՝ ճշմարտության միակ ճանապարհ ելանք, հիմա բազմահետք և բազմաշավիղ եղանք. օրինակ՝ բազմաթիվ, զանազան և տարբեր տեսակներով կկատարենք Աստուծո Փառաբանությունը, և նույն այլազանությունը կտիրե նաև մեր վարք ու բարքին մեջ։ Այնպես որ գրեթե նույն վնասները կկրենք, ըստ հին պատմության, երբ կպատերազմինք եղբայր եղբոր հետ, և ընկեր ընկերի հետ, քաղաք քաղաքի հետ և օրենք օրենքի հետ։ Երկրավոր զբոսանքներով, վաճառականությամբ և առևտուրով խոսակից և հաշվակից ըլլալով հանդերձ իրարու հետ, երբ խաղաղության Աստուծո ներկայության կհավաքվինք խաղաղություն ուզելու համար, կխրտչինք ու կխռովինք։ Եվ տարբեր ազգի և տարբեր լեզվի պատկանողներու վերաբերմունք կունենանք իրարու հանդեպ. ըլլալով աս անոր խուժ, և ուրիշներ ուրիշներու դուժ». այսինքն իրարու անծանոթ, օտար և

մինչև իսկ թշնամի կթվինք ըլլալ (Անդ էջ XIV. Բղդ. նաև Կող. Գ. 11: Ա Կորնթ. ԺԴ 11, գրաբար):

Նույն և նման չէ՞ նաև կացությունը ներկայիս մեր մեջ, երբ ոմանք, մեկ կողմեն ընդունելով և հայտարարելով հանդերձ, որ նույն ազգին և Եկեղեցիի զավակներ են, նույն մշակույթը և պատմությունը ունին, մյուս կողմեն թեմեր կհափշտակեն նույն Եկեղեցիի տարբեր իրավասության շրջանակեն: Ալ չենք հիշեր կուսակցական այլամերժությունը, որով իրարու հանդեպ այնպես դիրք բռնած ենք որ կարծես թե տարբեր, մինչև իսկ իրարու օտար ու թշնամի ազգերու զավակներ եղած ըլլայինք:

Ուրեմն, Հովհաննես Օձնեցի Հայրապետը աչքի առջև ունենալով իր ժամանակի մեր ժողովուրդին կրոնական ու բարոյական անմխիթար կացությունը մեկ կողմեն, և մյուս կողմեն նկատի ունենալով արտաքին պայքարները և թշնամությունները իր ժողովուրդին դեմ, հատկապես քաղկեդոնական վեճերը, կազմեց Հայ Եկեղեցիի ԿԱՆՈՆԱԳԻՐՔը, ի մի հավաքելով իր ժամանակին գոյությունը ունեցող և հոս ու հոն ցրված կանոնախումբերը, և մեկ հատորին մեջ համադրելով զանոնք՝ ստեղծեց Հայոց ԿԱՆՈՆԱԳԻՐՔը, վերջավորության ավելցնելով անհրաժեշտը նաև իր կողմեն: Իր նպատակն էր նախ բարեկարգել ու վերանորոգել իր Եկեղեցին և միակերպություն ստեղծել անոր մեջ. անոր իշխանավորներուն ձեռքը տալ օրինագիրք մը, որով կառավարեին իրենց հոտը և կառավարվեին նաև իրենք: Մյուս կողմե իր նպատակն էր հերքել վերագրումները և քննադատությունները իր Եկեղեցիին դեմ ու պապանձեցնել անոր հակառակորդները, որոնք ի միջի այլոց կամբաստանեին զայն իբրև ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆ չունեցող Եկեղեցի մը:

Նույն ոգիով և սկզբունքով ճամբա պետք է ելնենք նաև մենք:

Ներկայիս մենք ալ ունինք մեր ներքին և արտաքին բազմաթիվ դժվարությունները և մտահոգությունները, որոնք դարմանի կկարոտին և լուծումի կսպասեն: Օրինակներ.

1.—Ի՞նչ են, և ինչ պետք է ըլլան, փոխհարաբերությունները Ամենայն Հայոց Հայրապետության և Կիլիկիո Կաթողիկոսության, որպեսզի անգամ մըն ալ չկրկնվի այն ձգտյալ կացությունը, որ գոյություն ունի այսօր երկու Աթոռներու միջև:

2.—Այսօր արտասահմանի յուրաքանչյուր թեմ յուրահատուկ կանոնադրություն ունի. ասոնք ոչ միայն այլազան են, այլ նաև երբեմն իրարու հակասական և հաճախ կհակասեն նաև Օձնեցիի կազմած Կանոնագիրքի ոգիին և տառին, և կձգտին Եկեղեցին ենթարկել աշխարհիկ կազմակերպության մը իշխանության, մինչև իսկ կվերածեն զայն աշխարհիկ կազմակերպության մը, մոռնալով կամ անտեսելով անոր դարավոր և հիմնական կրոնական և կանոնական սկզբունքները որոնց վրա հաստատված է Եկեղեցին: Ինչ պետք է ընել՝ թեմերու կանոնագրությունները իրարու մոտեցնելու և նույն կրոնական ու եկեղեցական սկզբունքներու վրա դնելու անոնց հիմքերը, որպեսզի Եկեղեցին չշեղվի յուրահատուկ իր շավիղեն և չայլայլի իր կրոնական և հոգևոր նկարագիրը:

3.—Ինչ են և ինչ պետք է լինին պայմանները եկեղեցական զանազան կարգերու թեկնածուներու ձեռնադրության, որպեսզի ոչ միայն անարժաններ, այլ նաև աշխարհիկ մտայնության տեր մարդիկ չսպրդին եկեղեցական կարգերե ներս: Ինչ են Ավագության, Վարդապետական գավազանի, Ծայրագունության և Արքության տիտղոսներու տվչության պայ-

մանները, որպեսզի շնորհքով կարդալ չգիտցողներուն անգամ Վրդ.ական ու Ծայրագունության պանծալի և պատասխանատու տիտղոսները չտրվին, և ծիծաղելի չի դառնա Հայց. Եկեղեցին հաչս օտարաց՝ Եպիսկոպոսություն և Արքություն շնորհելով ծխատեր քահանայի պաշտոն ու պարտականություն կատարող հոգևորականներու:

Եվ տակավին կան բազմաթիվ նման հարցեր, որոնք հստակ և օրինական լուծումի կկարոտին, որպեսզի Եկեղեցին և իր հոգևոր իշխանությունը բարձր պահեն իրենց արժանապատվությունը հաչս իր հետևորդներուն, քույր Եկեղեցիներուն և բոլոր օտարներու, որոնք կհետաքրքրվին Հայ Եկեղեցիով: Մեր կարծիքով՝ այս բոլորը իրենց լուծումը պիտի գտնեն կազմությամբը Հայց. Եկեղեցիին ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ:

Ե. ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԿԱԶՄԵԼ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ

Այս մարզի մեջ մեր կատարելիք գործը, փառք Աստուծո, մեծագույն չափով դյուրացած է արդեն: Մենք պարտինք երախտապարտ ըլլալ նախ՝ հայաստանցի մտավորական Վազգեն Հակոբյանի, որ բծախնդիր աշխատասիրությամբ և քննական տվյալներով կազմած է «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» հոյակապ ու կոթողական գործը, երկու հատորներով: Երախտապարտ պետք է լինինք նաև Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտին, որ հրատարակած է զայն Երևանի մեջ, առաջին հատորը 1964-ին, իսկ երկրորդը 1971-ին: Այսպես իրականացած է՝ հայրենի պետության հովանավորությամբ և հոգատարությամբ՝ այն ինչ որ չէին որած կամ չէին կրցած ընել, ու հավանաբար պիտի չկարենային ընել, Հայ Եկեղեցվո բարձրագույն իշխանությունները, իրենց ներկա ուժերով ու մտայնությամբ: Այսօր նույն անկարողության մատնված է Հայց. Եկեղեցին գրաբար Աստվածաշունչի քննական հրատարակության և անոր աշխարհաբար ամբողջական թարգմանության անհետաձգելի և ամենակարևոր գործին մեջ: Ամեն գնահատանքի արժանի է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ և նյութական միջոցներով հրատարակված արևելահայ աշխարհաբարով Նոր Կտակարանը, և ընդ մամլով եղած արևմտյան աշխարհաբարով Նոր Կտակարանը: Այս գործն ալ, այսինքն գրաբար Աստվածաշունչի քննական և ամբողջական հրատարակությունը, մենք պիտի ակընկալենք դարձյալ հայրենի կառավարության պաշտոնական կազմակերպություններեն, ինչպես կիմանանք որ կատարված է այդ նույն աշխատանքը դրացի Վրացական Հանրապետության մեջ:

Հրատարակված «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»ը իր ներկա ձևին մեջ կարելի չէ գործածել իբրև Հայց. Եկեղեցվո Կանոնագիրքը որքան ալ մեծապես գնահատելի և շնորհակալ աշխատանք մը ըլլա այդ ինքնին. նախ այն պատճառով, որ այդ երկասիրությունը այդ նպատակով չէ հրատարակված. երկրորդ՝ չի կրեր Հայց. Եկեղեցիի հոգևոր բարձրագույն իշխանության վավերացման կնիքը. Երրորդ՝ անգործնական է անոր գործածությունը իր ներկա ձևին մեջ. փնտռված կանոնները՝ եթե ոչ անկարելի՝ գեթ դժվար է գտնել այդ խճողված 50—60 կանոնախումբերուն մեջ: Բաց աստի այդ կանոններեն շատ-շատերը մեռյալ տարր են և այլապես պատմական արժեք միայն ունին և հետևաբար կորսնցուցած են իրենց այժմեությունը: Իսկ ուրիշ բազմաթիվ կանոններ կրկնված են բազմաթիվ անգամներ այդ կանոնախումբերուն մեջ: Հետևաբար՝ անհրաժեշտ է **զտումի** և **զատումի** ենթարկել

զանոնք, և ապա ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼ ու ԴԱՍԱՎՈՐԵԼ ըստ նյութի: Հուսկ ապա՝ Եկեղեցիի բարձրագույն իշխանության կողմե վերջնական ձև պետք է տրվի, վավերացվի և հրահանգվի անոր գործածությունը իբրև պաշտոնական ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻԻ:

Զ. ԿԱՆՈՆ ԿԱՐԳԱՎՈՐԱՑ

Եվ որովհետև այս ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ գործադրությունը պիտի կատարվի եկեղեցականներու ձեռքով, այս իրողությունը կառաջնորդե մեզ, երկրորդ տեսակի ԿԱՆՈՆԱԳՐՔՈՒՅԿ մը ունենալու անհրաժեշտության:

Եթե հարցվի մեզի, թե Հայց. Եկեղեցին իր պաշտոնյաները ո՞ր ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆով կպատրաստե, կամ ինչ սկզբունքներով կդաստիարակե զանոնք. և կամ հոգևորականներ ինչ կանոններու համաձայն կկարգավորեն իրենց առօրյա ընթացիկ կյանքը, ոչ մեկ գրավոր ԿԱՆՈՆ կրնանք դնել անոնց տրամադրության տակ: Եվ որովհետև հոգևորականության կենցաղը պետք է ընթանա համաձայն հատուկ ԿԱՆՈՆի մը, որմե այսօր զուրկ է Հայց. Եկեղեցին, անհրաժեշտությունը կծագի կազմելու հոգևորականաց հատուկ գրքույկ մը, որ իր մեջ բովանդակե կրոնավորներու վերաբերյալ զուտ հոգևոր ու բարոյական կենցաղի կանոնները: Ուր ճշդված ըլլան, թե ինչ հոգևոր ու կրոնական հիմքերու վրա կկենա կրոնավորական կյանքը, և ինչ են կերպերը և օրենքները զայն իրականության վերածելու. կրոնավորներ ինչպես կրնան ավելի լավ արժևորել իրենց ժամանակը և կարողությունները, և ինչ ոգիով կատարել իրենց պարտականությունները: Այս գրքույկը կարելի է կոչել «ՍԱՀՄԱՆՔ ԿՐՕՆԱՒՈՐԱՑ» ինչպես կոչված է Բարսեղ Հայրապետի կողմե պատրաստված համանման գործ մը. կամ կարելի է կոչել «ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆ ԿԱՐԳԱՒՈՐԱՑ», ինչ որ արդարև պիտի ըլլա մեր ի մտի ունեցած գործը, իր խորքին և պարունակության մեջ:

Ուրիշ խոսքով, ինչ որ ըրած է Ներսես Շնորհալի Հայրապետը իր ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ թուղթին կրոնավորներու, առաջնորդներու և քահանաներու վերաբերյալ գլուխներով, նույնը կատարել ավելի կարգավորյալ և ավելի հավելյալ ու ճոխացյալ ձևի տակ և վերածել առ ձեռն գրքի մը, որուն վրայեն և որուն համաձայն պետք է կատարել եկեղեցականներու հոգևոր դաստիարակությունը և որ պետք է գտնվի ամեն մեկ եկեղեցականի ձեռքին մեջ իբրև իր կյանքի առաջնորդը: Առանց այս ներքին, հոգևոր ԿԱՆՈՆի կարելի չէ պատրաստել լավ կազմավորյալ և բարոյապես ամուր նկարագրի տեր գիտակից եկեղեցականներ, որոնք ունենան արժանիքը, կարողությունը և գիտակցությունը գործադրելու կազմվելիք ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻԻ:

Հոգևորականաց հատուկ կազմվելիք այս կանոնագրքույկի մեջ զորավոր շեշտ պիտի դրվի ԱՂՈԹՔԻ և ԱՇԽԱՏԱՆՔԻ վրա, առանց որոնց կրոնավոր մը համը կորսնցուցած աղի կվերածվի, որ այլևս ոևէ բանի չի ծառայեր «բայց եթէ ընկենուլ արտաքս...»: Վերականգնել հին վանական ու կրոնավորական կարգախոսը. «ԱՇԽԱՏԻԼԸ ԱՂՈԹԵԼ Է» և փոխադարձաբար: Եթե լոկ հանգստավետ կյանք մը վարելու համար կընդգրկենք եկեղեցական կամ կուսակրոն ասպարեզը, ամենեն ողորմելի մարդիկն ենք աշխարհի վրա: Ծուլությունը և աշխարհայնությունը ամենեն աղարտիչ հոգեվիճակներն են կրոնավորներուս համար: Ասոնք անխուսափելիորեն պիտի մղեն զմեզ մեր տրամադրության ներքև դրված թանկագին ժամանակը

սպանելու խաղամոլությամբ «...շվայտությամբ և արբեցությամբ» և այլ բազմաթիվ մեղքերով, որոնք կհիշվին մեր Ժամագրքի սկիզբը, բայց հատկապես «դատարկաբանությամբ..., տրտնջելով, դժգոհելով, բանբասելով և հայհոյելով»:

Այս ներքին կանոնին նպատակն է կրոնավորը առաջնորդել վերածնունդի և վերականգնումի: Ուրիշ խոսքով վերակենդանացնելու անոր մեջ աստվածային պատկերը, որով ստեղծված էր մարդը, և որ աղարտված է անհնազանդությամբ ու ծուլությամբ:

Ինչպես ակնարկեցինք վերև, Հայց. Եկեղեցիի ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՔը պիտի վերակազմվի հիմնվելով Վազգեն Հակոբյանի աշխատասիրած «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» պատկառելի գործին վրա վերադասավորումի և տեսակավորումի ենթարկելով զայն: Իսկ ուրկե՞ պետք է առնել տարրերը կրոնավորներու հատուկ այս ներքին ԿԱՆՈՆԻՆ: Անշուշտ կարելիութենե դուրս չէ օգտագործումը քույր Եկեղեցիներու մեջ արդեն իսկ գոյություն ունեցող և կիրարկվող նման աղբյուրներու. սակայն հեռու երթալու պետք չունինք. մեր Եկեղեցվո մեջ ալ կան անհրաժեշտ աղբյուրները և տարրերը կազմելու համար նման ԿԱՆՈՆ մը:

Հետևյալներն են անոնք ըստ մեզի:

Ա.—Առաջին հերթին իբրև աղբյուր պիտի օգտագործվի բնականաբար Աստվածաշունչը, իր Հին և Նոր Կտակարաններով, որոնց մեջ շատ տարրեր կան, որոնք հատկապես կվերաբերին Աստուծո պաշտոնյաներուն, իբրև հիմնական սկզբունք, հորդոր, խրատ ու հրահանգ. հատկապես Ղևտացվոց գրքին, մարգարեներու գրությանց և հովվական թուղթերու մեջ:

Բ.—«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»ի մեջ ալ բազմաթիվ կանոններ կան, որոնք լոկ հոգևորականներու կատարելության և սուրբ կենցաղի կվերաբերին, որոնց մեջեն իրենց այժմեությունը պահածները նույնությամբ կարելի է փոխադրել այս ԿԱՆՈՆ-ին մեջ:

Գ.—Ներսես Շնորհալիի ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ-ին մեջ կրոնականներու վերաբերյալ գլուխները թանկագին աղբյուրներ են այս նպատակին օգտագործելու համար:

Դ.—Եղիշե Վարդապետի «Վասն Վարդանանց պատերազմի» ծանոթ մատյանի վերջավորության կա «ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ՅԱՂԱԳՍ ՄԻԱՆՁԱՆՑ» վերնագրով գրություն մը, որ շատ կարևոր օժանդակ պիտի հանդիսանա այս ներքին ԿԱՆՈՆ-ին կազմության մեջ:

Ե.—Վերջապես կա ուրիշ կարևոր աղբյուր մը, որուն գոյության մենք վերահասու եղանք մեր «Հայազգի Սուրբեր» գործին պատրաստության ընթացքին, այն է «ԹԱԹՈՒԼ ՃԳՆԱՎՈՐԻ ԽՐԱՏՆԵՐԸ» իր աշակերտ Թումասի: Այս «ԽՐԱՏԱԿԱՆ»ը կգտնվի Հ. Մկրտիչ Ավգերյանի խմբագրած «Լիակատար վարք եւ վկայութիւն Սրբոց» (Տպ. Վենետիկ, 1810) մեծահատոր Հայսմավուրքի մեջ, Թաթուլի, Վարոսի և Թումասու հատկացված վարքագրության մեջ, (էջք 642—644): Թե ուրկե առած է Հ. Ավգերյան այս «ազդու իրատները» և «անվրեպ կանոնները» հնարավորությունը և ժամանակ չունեցանք ստուգելու: Սակայն բացահայտ կերևի որ ինք չէ հորինած զանոնք: Մենք թարգմանաբար և գրեթե ամբողջությամբ տված ենք զայն մեր վերոհիշյալ գործին մեջ: Նույնը ըրած ենք նաև Եղիշե վրդ.ի վերոհիշյալ «ԲԱՆ ԽՐԱՏՈՒ» գրության. իսկ համառոտած և համադրած ենք Շնորհալիի հորդորները և հրպ-

հանգները, որոնք կվերաբերին կրոնավորներու, իր ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ-ին մեջ:

Մեր կարծիքով ներկայիս Հայց. Եկեղեցիի առաջնահերթ կարիքը այս երկու գրքերու կազմությունն է: Առանց այս երկու «Տոքյուման»ներու անկարելի է սպասել ԿԱՐԳ ու ԿԱՆՈՆի տիրակալությունը Հայց. Եկեղեցիեն ներս, և հայ հոգևորականության մեջ: Եկեղեցու՝ն բարեկարգութենեն առաջ կուգան այս երկու գործերու պատրաստությունը: Առանց ասոնց անօգուտ է, անիմաստ է և անգործնական է մտածել կամ խոսիլ Հայ Եկեղեցիի բարեկարգության մասին: Գործնականապես Հայ Եկեղեցիի բարեկարգությունը պիտի սկսի երբ այս երկու գիրքերը հորինվին, վերանայվին ու վավերացվին Եպս.ական ժողովի կողմե, և հրահանգվին ի գործադրություն Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով:

Պատրաստվելիք ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ և հոգևորականաց հատուկ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆ-ի մեջ Հայ Եկեղեցին և հոգևորականությունը արդեն իսկ բարեկարգյալ պիտի պատկերացվի: Կարևորագույնը անոնց ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ պիտի ըլլա, որ պիտի կատարվի հոգևոր բարձրագույն իշխանության կողմե մասնավորաբար, և հոգևորականության ձեռամբ ընդհանրապես: Եվ այս գործադրության ընթացքին է, որ մեջտեղ պիտի գա Հայ Եկեղեցին կարգավորյալ և կանոնավորյալ տեսնելու մեր բարի կամեցողության և կարողության գոյությունը կամ չգոյությունը:

Մեր խոսքը վերջավորության կբերենք անգամ մը ևս կրկնելով և հիշեցնելով Առաքելական Պատգամը. «Ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ ԿԱՐԳի լինիցի»: Հաճելի պիտի ըլլանք Աստուծո, հրճվանք պիտի պատճառենք մեր հայրերու հոգիներուն, պիտի ուրախացնենք մեր ժողովուրդը, և երջանկություն ու խաղաղություն պիտի գտնենք նաև մենք՝ իրագործելով այն «ԿԱՐԳը և հավատքի հաստատությունը», զոր տեսնել կցանկար Մեծ Առաքյալն Պողոս իր հավատացյալներու մեջ: «Եւ որ միանգամ այսմ ԿԱՆՈՆի միաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոցա եւ ողորմութիւն» (Գաղ. Զ 16, բդդ. Փիլ. Գ 16):